Ֆիրդուս. տեղի և տեղացիների հիշողությունը

Զեկույց – Բուն TV

21/06/2019

Տիգրան Ամիրյան

բանասիրական գիտությունների թեկնածու,

«Մշակութային և սոցիալան նարատիվների լաբորատորիա» (CSN lab) ՀԿ-ի

համահիմնադիր և տնօրեն:

Այսօր ես կփորձեմ ծանոթացնել ձեզ "Ֆիրդուս. տեղի հիշողությունը'' հետազոտական նախագծի արդյունքներին: Այս նախագիծը մեր լաբորատորիան իրականցրել է 2018-2019 թվականներին՝ «Եվրասիա համագործակցություն հիմնադրամի» խաղարարական դրամաշնորային ծրագրի աջակցությամբ: Մեր հետազոտությունները շուտով կհրապարակվեն որպես գիրք: Արդեն մի տարի է՝ մենք հրապարակում ենք բնակիչների լուսանկարներն ու պատմությունները սոցիալական ցանցերում: Բացի այդ պատրաստվում է firdusmemory.com կայքը, որտեղ հնարավոր կլինի ներբեռնել գրքի էլեկտրոնային տարբերակը և ծանոթանալ այն վիզուալ և տեքստային նյութերի հետ, որոնք գրքում ներառված չեն:

Հետազոտական աշխատանքը եղել է թիմային. ես և իմ գործընկեր Սոնա Քալանթարյանը փորձել ենք ներգրավել տարբեր մասնագետների, որպեսզի ստեղծենք թաղամասի ավելի ամբողջական և տարբեր տեսանկյուններից դիտարկվող պատկերը:

Այս զեկույցի ընթացքում կխոսեմ Ֆիրդուսի ընդհանուր ճարտարապետական և քաղաքաշինական բնութագրի մասին, կանդրադառնամ Ֆիրդուսի բազմաէթնիկ կյանքին և այս միջմշակութային տեղի հիշողության որոշ կարևոր յուրահատկություններին, քանի որ նախագծում Ֆիրդուս թաղամասը

ուսումնասիրվում է նաև՝ որպես քաղաքային միջավայրում հայերի և ադրբեջանցիների խաղաղ համակեցության նմուշ:

Երևանցիները շատ լավ պատկերացնում են՝ որտեղ է գտնվում Ֆիրդուսի փողոցը: Հանրապետության հրապարակի կառավարական շենքերից մոտ 150 մետր հեռավորությամբ՝ Ֆիրդուսին սկսվում է Տիգրան Մեծի պողոտայից և ոչ հավասար գծով շարունակվում է մինչև Չայկովսկու փողոցը: Փողոցի առանձնատները ներքին բակերով միանում են հարակից Հանրապետության առաջին նրբանցքին (նախկին Ալավերդյան փողոց): Նեղ նրբանցքով Ֆիրդուսից կարելի է անցնել նաև դեպի Խանջյանի փողոցում գտնվող Մանկավարժական համալսարանի շենքի հետին բակը:

Արդեն այստեղ, երբ Ֆիրդուսի աշխարհագրական դիրքն ենք նկարագրում, ստեղծվում է մի հակադրություն, որը ես փորձել եմ համեմատել լեզվի կառուցվածքի հակադրությունների հետ: «Ուրբանիզմ և նշանագիտություն» էսսեում Ռոլան Բարտը ներկայացնում է քաղաքը՝ որպես խոսույթ, դիսկուրս՝ գտնելով քաղաքի կառուցվացքում նույն լեզվային հակադրությունները: Երևանյան քաղաքաշինական և ճարտարապետական այն դիսկուրսը կամ քաղաքի պատկերը, որ ձևավորվել է 1920-ականներից, առաջարկում է մի ուրբանիստական ցանց, որտեղ Հրապարակը դառնում է ոչ միայն ֆիզիկական կարևորագույն տարածք քաղաքի համար, այլև գործող քաղաքական, իշխանական ու նվիրական կարևորագույն տարածությունը. Լենինի հրապարակ, այնուհետև՝ Հանրապետության հրապարակ, և վերջերս ի հայտ են գալիս Հեղափոխության հրապարակ վերանվանման մտորումները:

Եվ այս քաղաքական կարևորագույն կենտրոնին կից թաղամասը միշտ շարունակում է լինել այդ ցանցից դուրս, կարելի է ասել՝ ապաքաղաքական: Ի տարբերություն այն ճակատային շքեղ ճարտարապետությանը, որով թաղամասը շրջափակվում է, ներքին տարածությունը մնում է ինքնաշեն, վերնակույլար շինությունների քաոսային խմբավորվորում, որտեղ կարծես բացակայում է պետական կամ պաշտոնական շինությունը: Մինչ օրս Ֆիրդուսում պահպանվում է այդ ամենը՝ կարծես

արհամարհելով իշխանությունների և բիզնես-սեկտորի կողմից իրար հաջորդող որոշումները՝ ապամոնտաժելու թաղամասը: Այստեղ պահպանվում են նաև հողագործության, թռչնաբուծության և անասնապահության որոշ տրանսֆորմացված ձևեր, ինչը, նորից, կտրուկ տարբերակում է թաղամասը կենտրոնի պատկերից: Այդ «այլ տարածության» միտքը մենք վերհանում ենք ոչ միայն ուրբանիստների վերլուծություններից, այլև տեղի բնակիչների բանավոր պատմություններից: Ֆիրդուսի նախկին բնակիչներից մեկը պատմում է 1960ականների սկզբի մասին հետևյալ դրվագը:

«Պարադների ժամանակ Տիգրան Մեծի կողմից գրուզավիկներով փակում էին մեր փողոցը, որ հանկարծ դուրս չգայինք ու չխանգարեինք պարադին: Մենք փողոցի երեխեքով պառկում էինք փորի վրա գետնին ու գրուզավիկի ակների արանքից նայում քայլող զինվորականների կոշիկներին»:

Նման հիշողության և հետհիշողության պատումները ցույց են տալիս, որ այսօրվա Ֆիրդուսի ընդհանուր բացասական պատկերը վաղուց էր ձևավորվել: Կարելի է օրինակ բերել մի ուրիշ դրվագ՝ ոչ թե հիշողության, այլ հետհիշողության, երբ բնակիչներից մեկը մեզ պատմում էր, թե ինչպես էր իր մայրը դեռ 1930-ականներին անընդհատ խնդրում ամուսնուն վերանորոգել տան հատակը, իսկ ամուսինը չէր համաձայնում, ասելով, թե դա անիմաստ է, քանի որ Ֆիրդուսը շուտով պիտի քանդեն: Եթե խոսենք լոկալ ինքնության մասին, սա վառ օրինակ է, թե ինչպես է ձևակերպվում այդ ֆիրդուսցիների ինքնության մի տեսակը՝ «վաղը կքանդեն», և Ֆիրդուսի երկակի ինքնությունը՝ «կենտրոնում, բայց ապակենտրոնացված»:

Այս ապակենտրոնացման ինքնությունը թաղամասը պահպանում ու արմատավորում է երկար տարիների ընթացքում: Խորհրդային տարիներին, ապա հետխորհրդային ժամանակաշրջանում շատ ու շատ փողոցներ վերանվանվում են, իսկ Ֆիրդուսը արդեն 100 տարուց ավել պահպանում է իր անունը և կյանքի ինքնատիպ ձևը:

Ֆիրդուսի այս օտար, այլ պատկերը շարունակեց իր տրանսֆորմացիաներն ու ամրապնդեց իր յուրօրինակությունը փոքր կենտրոնի հանդեպ 20-րդ դարի ավարտին, երբ 1990-ականներին այստեղ ի հայտ եկավ շուկան: Երևանցիների համար ծանոթ «Ֆիրդուսի շուկա» ձևակերպումը արագ դուրս մղեց ավելի ծանոթ «Ֆիրդուսի փողոց» արտահայտությունը:

Տների ճակատամասերին ավելացան կցակառույցներ, բեռնախցիկներ, կապույտ բրեզենտից տաղավարներ, մետաղական կամ փայտե սեղանիկներ: Կարծես բոլոր տները շատ արագ ձերք բերեցին իրենց երկակի կյանքի ձևը. ֆասադները՝ որպես առևտրային գոտի, և ներքին, բակային տարածքները՝ որպես ընտանեկան առօրյայի տեղ:

Մեր նախագծի շրջանակներում, ուսումնասիրելով շուկան, փորձել եմ դիտարկել այն՝ որպես Ֆիրդուսի համայնքի ներքին կյանքի ինստիտուցիոնալացման կարևոր մի մեխանիզմ: Իսկ մարդաբան Համլետ Մելքումյանը շուկայի մասին առանձին հոդվածում ցույց է տալիս Ֆիրդուսը՝ որպես մի երկար առևտրական շղթայի հատված՝ տարիներ շարունա սպասարկող երևանցիների ամենօրյա պահանջները: Ուշագրավ է, թե ինչպես է Ֆիրդուսը նմանվում արևելյան քաղաքների, այսպես կոչվող, հին քաղաքին՝ Մեդինային, որ իր հերթին կենտրոնացած է *սուկի*, այսինքն, շուկայի շուրջ:

Ծայր աղքատության տարիներին Ֆիրդուսը մարդկանց համար փրկություն էր: Բայց հիմա այդ բառը դարձել է տաբու: Բոլոր ոչ ֆիրդուսցիների համար «Ֆիրդուս»-ը կապված է ամենասարսափելի «մութ» տարիների հետ. պատերազմի ու տնտեսական շրջափակման պայմաններում բոլորը ստիպված էին հագուստ ու սնունդ գնել այստեղից: Հիշել Ֆիրդուսը նշանակում է հիշել սեփական անցյալի այն հատվածը, որն անցել է աղքատության մեջ: Երևանցիների համար Ֆիրդուսը տոպոս է, որը քաղաքը դուրս է մղում իր գիտակցությունից ու մարմնից՝ իբրև ցնցումային անցյալի բեկոր:

Ի սկզբանե առևտրային աշխուժությունը Ֆիրդուսում կապված էր իրանական ապրանքների ու իրանցիների հետ, բայց արդեն 2010-ականներին իրանցիներն այլևս չէին զբաղվում առևտրով՝ զիջելով իրենց տեղը հայերին:

Թեև շուկան դադարեց իրանական լինելուց, երևանցիները սկսեցին կապել ողջ թաղամասը հենց իրանական կամ արևելյան շուկայի հետ: Եվ իսկապես, Հանրապետության հրապարակից զբոսնելով Ֆիրդուսի ուղղությամբ՝ այստեղ մինչ օրս կտեսնեք փոքր իրանական ռեստորաններ ու կիսանկուղային սրճարաններ, զբոսաշրջային գրասենյակներ, փոքր հյուրանոց, որտեղ հիմնականում ապրում են իրանցի զբոսաշրջիկներ:

Շուկայի ակունքների մասին բնակիչներից մեկը պատմում է մեզ.
«Ճիշտ ա, առևտուրը սրտեղ 90-ականներից սկսեց, բայց պապաս պատմում էր, որ դեռ էն ժամանակ, որ ինքը փոքր էր, սրտեղ ուղտերի վրա բարձած աղ էին բերում, ծախում: Միշտ էլ մի բան ծախել ու առել են էս փողոցում»:

Եվ այսպես, տեղի ու տեղացիների հիշողությունը վերադարձնում է համայնքին կարևոր մի գործառույթ:
Երեկոյան, երբ շուկան փակվում էր, հայերն ու իրանցիները միասին էին անցկացնում հանգիստը բակերի ծառերի տակ, ընթրում միասին ու քնում հարևան սենյակներում:
Ֆիրդուսցիների համար դա ինչ-որ նոր բան չէր, քանի որ գրեթե յուրաքանչյուր ընտանիքում, յուրաքանչյուր հասցեում մինչ այդ պահպանվել էին կենդանի ու հարազատ հիշողություններ ադրբեջանցիների, քրդերի ու իրանցիների հետ համատեղ կյանքի մասին: «Ուրիշի» կերպարն այստեղ, հավանաբար, ընկալվում էր ավելի հանգիստ ու բաց, քան քաղաքի ցանկացած այլ մասում:

Ֆիրդուսի բնակիչներից շատերը, պատմելով իրենց փողոցի, թաղամասի ու տան մասին, սկսում են *«էս թուրքի տուն էր»* նախադասությամբ: Ավագ սերունդը հիշում է այդ տներում ապրող ադրբեջանցիներին և ունի լավ պահպանված հուշեր համատեղ

կյանքի մասին: Հիշում են ոչ միայն բնակիչները. նրանց տներում որոշ ճարտարապետական դրվագներ առանձնանում են մահմեդական կենցաղին բնորոշ ոճով (կամարաձև պատուհաններ, կեղծ պատուհաններ նամազի համար և այլն):

Թաղամասի անցյալի միջէթնիկ պատկերը կարելի է բնութագրել՝ որպես քրիստոնեական ու մահմեդական համայնքների միասնական ու խաղաղ բնակության փորձառություն: Մահմեդական համայնքի մեծամասնությունը ադրբեջանցիներ էին: Ֆիրդուսցիների «միասին կյանքի» փորձը երբեք չի ընդհատվել, այլ փոխակերպվել է՝ պահպանելով հիմնական փիլիսոփայությունը՝ առավելագույն հանդուրժողականություն և սրտաբացություն ուրիշների հանդեպ:

Ադրբեջանցիները 1920-ականներին կիսում են տները տարբեր քաղաքներից գաղթած հայերի հետ, նրանք միահսն միշտ ընդունում են վարձակալող ուսանողներին՝ տարբեր հայկական և ադրբեջանական քաղաղներից ու գյուղերից, ապա հայերը ընդունում են իրանցիներին, և այսօր ֆիրդուսում շարունակում են կացարաններ վարձակալել Հնդկաստանից եկած միգրանտները:

Մինչև 1940-ականների վերջ Ֆիրդուսի բնակչության մեծամասնությունը կազմել են ադրբեջանցիներ: Պատկերը սկսես փոխվել, երբ 1948 թվականին Ստալինը ստորագրեց իր հայտնի հրամանը՝ «Կոլտնտեսականների և այլ ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ-ի Քուռ-Արաքսյան հարթավայր»: Ըստ պատմաբանների վարկածների՝ ադրբեջանական բնակչությունը արտաքսվեց Հայաստանից, որպեսզի նրանց փոխարեն մայրաքաղաքը ընդունի հայրենադարձներին: Այս տարիների մասին նույնպես շատ ու շատ բանավոր պատմություններ ենք հավաքագրել: Հետաքրքիր է, որ բնակիչների մի մասը շատ լավ գիտակցում է խորհրդային տարիներին տեղի ունեցող քաղաքական գործնթացների նշանակությունն ու հետևանքները: Հաճախ ֆիրդուսցիները ասում են, թե ադրբեջանցիներին տեղահանելով ու սփյուռքահայերին այստեղ տեղափոխելով՝ խորհրդային իշխանությունները շատ ազդեցիկ հարված հասցրեցին համայնքին: Մի կին, պատմելով այդ տարիների

մասին, ամփոփում է. «Էդ մարդկանց ստեղից աքսորեցին, բերեցին սփյուռքի հայերին, բայց դրանք էլ չապրեցին ստեղ. իրանց էլ աքսորեցին Սիբիր»:

1970-ականների արխիվային նյութերը ցույց են տալիս, որ թաղամասի մահմեդական բնակչությունը այլևս մեծամասնություն չի կազմում Ֆիրդուսում: Իսկ Ղարաբաղյան հակամարտության տարիներին այստեղ բնակվում էին ընդամենը մի քանի ընտանիք, որոնք էլ ստեղծված քաղաքական իրավիճակում ստիպված եղան լքել իրենց տները:

Հետաքրքրական է, թե ինչպես են պատմում ֆիրդուսցիները համատեղ խաղաղ կյանքի մասին և թե ովքեր են պատմում դրա մասին:
Բանավոր պատմությունները հավաքգրելիս՝ մենք առնչվեցինք մի երկակի երևույթի. հիմնական պատմողնեն ու իրենց հիշողությունները պատումնայնացնողները կանայք էին: Սակայն ամեն պատմություն սկսվում էր տարբեր զարմանալի բառակապակցություններով. օրինակ՝ որոշ կանայք հաճախ չէին ուզում մեր հետ սկսել հարցազույցները՝ հիմնավորելով դա իրենց «ոչ այդքան էլ ֆիրդուսցի լինելով». «Ես ստեղ հարս եմ, ի՞նչ պետք ա հիշեմ»: «Հարսները հիշողություն չունեն», անցյալը տրված է տղամարդկանց, սակայն հենց կանանց առօրյան ու փորձն է, որ ավելի շատ է կապված եղել տեղացի մահմեդականների հետ:

Կանայք, օրինակ, հիշում են ճաշատեսակների պատրաստման բաղադրություններ, ինքնաբուժության տարբեր պրակտիկաներ, որ իրենց փոխանցվել է ֆիրդուսաբնակ ադրբեջանցի կանանցից: Սոնա Քալանթարյանը Ֆիրդուսի կանանց մասին առանձին հոդված է պատրաստել մեր գրքի համար:

Նախագծի ընթացքում մենք համոզվեցինք, թե որքան կարևոր է կիրառել խորքային հարցազրույցների մեթոդը: Ոչ մի լրագրողական նյութ չի կարող փոխանցել այս տեղի իրական փորձը: Հարցազրույցների ժամանակ տեղացի մի կին սկսում էր թաղամասը նկարագրել ու վերհիշել անցյալը զայրացած և որպես մի բացասական

երևույթ՝ ասելով. *«Հա, սրեղ սաղ թուրքեր էին, թուրքի տուն էր սրեղ...»:* Բայց երբ սկսում էր պատմել առօրյա կյանքի մասին, հիշում էր իր հարևանին՝ ազգությամբ ադրբեջանցի, և շատ ջերմ հիշողություններ էր կապում վերջինիս հետ. *«Այգեպան էր մեր հարևանը, հիշում եմ՝ ամեն գարուն շատ սիրուն ու խոշոր պիոններ էր բերում մեզ. լավ խելոք մարդ էր»:* Մինչ չենք անցնում այդ առօրեականության դիսկուրսին, անցյալը նկարագրվում է պատմության, հակամարտության լեզվով: Իսկ առօրյա կյանքն ավելի խաղաղ է ու առավել բնորոշ այս միջէթնիկ թաղամասին:

Մի այլ հիշողության տեսակ էլ գրավեց իմ ուշադրությունը, երբ բնակիչները իրենց հուշերը պատումնացնելով՝ անընդհատ խտացնում էին անցյալը՝ սեղմելով բոլոր տրավմատիկ իրադարձությունները, և բացատրելով դրանք իբրև Ղարաբաղյան հակամարտության հետևանքներ:

Մեկնաբանելով խմբային լուսանկարներից մեկը, բնակիչը ասում է հետևյալը. *«Էս մանկապարտեզը Վերնիսաժի կողքն ա: Ֆիրդուսից շատ էին երեխեք գնում էնտեղ: Այ էս ձախից, ներքևում նստածը մեր Սուլեյմանն էր: Մեր մոտ շատ կային ադրբեջանցիներ, ղարաբաղյան շարժման տարիներին սաղ գնացին»:*

Բայց դրանից քիչ առաջ նույն զրուցակիցը ցույց էր տալիս տան առանձին հատվածներ, որ սարքել էր իր պապը՝ գնելով հողը տեղի ադրբեջանցուց դեռ 1920-ականներին: Այսինքն՝ այդ տանը և հարևանությամբ արդեն 20-րդ դարի կեսին ադրբեջանցիներ չէին ապրում:

Հիշողությունը հաճախ սեղմում է պատումը, ճնշում և խտացնում է անցյալի երկար սյուժետային գիծը, փորձում է արդիականացնել և պատմել ամեն ինչ ավելի մոտեցրած ընթացող կյանքի «այստեղ ու հիմա»-ին: Այն, որ այստեղ ադրբեջանցիներ են ապրել, հիշում են ոչ միայն ֆիրդուսցիները, այլև քաղաքի այլ թաղամասերի բնակիչները, ովքեր նույնպես պատկերացնում են մահմեդական բնակչության հեռանալը՝ որպես միաժամանակյա ընթացք՝ պայմանավորված Ղարաբաղյան հակամարտությամբ: Մինչդեռ արխիվային տվյալների համաձայն՝ 1970-ականների դրությամբ այնտեղ մնացել էին ընդամենը մի քանի ադրբեջանական կամ խառը (հայ-ադրբեջանական) ընտանիքներ:

Կարելի է ասել, որ Ֆիրդուսի՝ քաղաքական տարածությունից դուրս մնալը օգնում է այդտեղ բնակվող համայնքին չտրվել այս կամ այն մեծ նարատիվներին ու շարունակել ապրել սովորական առօրեական դիսկուրսի մեջ, և հենց դա է պահպանում դրական, խաղաղ փորձի հիշողությունը:

Խոսքս ավարտեմ բանավոր պատմություններից ևս մի մեջբերումով: Այս հարցազրույցը անցկացրել եմ դեռ 2016 թվականին: Բնակիչներից մի կին, պատմելով թաղամասի առևտրային տարիների մասին, հետևյալն է ասում.
«Երբ պարսիկները նոր էկան, տեղացիները տարբեր խանութներ էին առաջարկում Տիգրան Մեծի վրա ու քաղաքի ուրիշ փողոցներում, բայց չէին ուզում: Մի պարսիկ տենց էլ ասեց՝ ուրիշ տեղերում սենց լավ չի, ոնց էստեղ: Էս փողոցը պարսիկ գրողի անունով ա: Հնար լիներ, էս թաղամասը սիրուն կսարքեինք, ախր Ֆիրդուսը մերն ա: Ֆիրդուսի հուշարձան էլ էին ուզում դնեին»:

Ֆիրդուսում չկան հուշարձաններ, չկա պատմամշկութային ֆոնդ կամ հանրային տարածքներ, որ կգրավեր հանրության ուշադրությունն ու կլիներ պահպանման պահանջ: Սա տեղի բնակիչների համար շատ անձնական տարածք է՝ լի հուշերով, բայց առանց նյութական հուշարձանների: Կարծում եմ՝ հենց այդ առօրեական փորձառությունն է հիշողության ամենափխրուն ըեսակը, որն անրաժեշտություն չունի վերածվելու արձանների կամ թանգարանների, նրա ուժն ու կարևորությունը հենց կյանքն է: